Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 381 - Ա որոշման

«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի ուսուցման 2 դահլիճները, հարակից սանհանգույցը և խոհանոցը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպման համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Քազազնունու փողոց 12 շենք Բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է $42,204 (քառասուներկու հազար երկու հարյուր չորս) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի հովանու ներքո գործող մարզային մանկավարժահոգեբանական կենտրոնների մասնագետներ և կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ մայիսի 19, 2021 թ. Ավարտ՝ օգոստոսի 31, 2021 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել կենտրոնի 2 դահլիճները, խոհանոցը և սանհանգույցը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 42,204 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

	ֆինանսական միջոցների ծավալը	Իրականացվելիք շինվերանորոգման աշխատանքների մանրամասն ծավալներն ներկայացված են պայմանագրին կից հավելվածում Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև օգոստոսի 31, 2021 թ.:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 42,204 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, պայմանագիր կնքված 16.04.2021 թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՀ, ք. Երևան 0010, Խորեացի 22, ՀՎՀՀ 02517115) և «Կանակա» ԲԲԸ (ՀՀ, ք. Վանաձոր 2022, Նժդեհի փողոց 4, ՀՎՀՀ 06901369) միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

13.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ